

ԲԱԺՆԵԳԻՆ

Ի Պուլկարիս  
Տարեկ. 10 ֆր.  
Վեցամս. 5 "

Արտասահման

Տարեկ. 12 ֆր.  
Վեցամս. 6 "  
ԿԱՆԻՒԿ



ՊԵՏԱ

Գրութիւնք եւ  
շնո սրուիր

Հասցէ  
DIRAN  
PAPAZIAN  
YILDIZ TABIA  
VARNA  
BULGARIE

## ՇԱԲԱԹԱՅԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

Դ ՏԱՐԻ

ՕԿՏՈՍՈՍ 12 ՇԱԲԱԹ 1900

ԹԻԻ 174

### ԻՆՉ ԸՆԵՆ ՄԻ . . .

Սեւ սեւ ամպերով թանձրացած հորիզոնի մը վրայ՝ ինչպէս եղեր է Հայունը երկար դարերէ ի վեր, իր քաղաքական առանձնաշնորհումը կորսնցնելուն պատճառաւ, կէս զարգացած ժողովուրդի մը է՛ն յատկանշանական տկարութեան ձեռք երկնցուցին խել մը անձնաւորութիւններ, զորս ողջմտութիւնը բարեբաղդաբար սկսած է այսօր դատաւիտել ու փետթած հաւերու պէս ապագայ պատմութեան յանձնել:

Ժողովուրդին այդ տկարութիւնը՝ անհաշիւ խանդավառութիւնն էր, որ ուղղակի թուրք թէ՛ ժիւրի անտանելիութիւնէն ծնունդ առած, անուղղակի կերպով լաւագոյն և ճարպալի պատառը կը ներկայացնէր խաչագողերու, որ սկսած էին արդէն եղլիւր ցուցնել աշխարհի չորս կողմէն: Երբ մեր յիզարիտակ, մարմիններ՝ ամբոխին դիւրաբորբոք ու աննպատակ խանդավառութեանը քիչ մըն ալ խոհեմութիւն ու չափաւորութիւն ներշնչելու տեղ, աւելի ևս կարծարժէին զայն, անդին՝ թուրք կառավարութիւնն ալ՝ վայրագ թափով մը գրեթէ միևնոյն մտքին կը ծառայէր, հետզհետէ խտացընելով տանջանքներու շարքը հայոց նկատմամբ: Այնպէս որ այս երկու առերևութապէս իրարու հակընդդէմ տարրեր՝ կարծես, գաշնակցօրէն իւր կը թափէին վառած կրակին վրայ, սակաւի համամտութեան մը հասցնելու համար ամբոխին յուսահատ խանդավառութիւնը, մէկը՝ ստեղծելով նորանոր խռովութիւններ, իսկ միւսը՝ անժամանակ ու աղիտաբեր ցոյցերու մէջ փնտռել տալով ժողովուրդին անմիջական փրկութիւնը:

Այս ընդհանուր իրարանցումին մէջն է ահաւասիկ, որ խաչագողեր՝ ճիշդ վարպետ ձկնորս:

նեքու փութլուտութեամբ, սկսեցին ճի՛ ճի՛ նայիլ պղտոր ջուրին վրայ և ի տես խայտաբղէտ պարտ ձուկերու թուքերնին կուլ տալ գաղանային վայրագութեամբ: Կուրէն, Ալիւրէն, սարէն ու ձորէն անձրևի պէս խաչագողեր թափեցան մեր գլխուն: . . . մարդիկ՝ որոց եղական առաւելութիւնն էր միայն անժանօթ ու նեխի պէրիսիզ ըլլալնին:

Թուրք ոստանին մէջ ահաբեկչի սուրը կախուած էր արդէն դրամի համար. անոր քով երեցաւ անմիջապէս խաչագողին սուրն ալ, որ շատ աւելի առատ հունձք ունեցաւ քան ունեկող ահաբեկչինը. վասն զի՝ լսեցէ՛ք ժողովուրդ, 1895 թուականին խաչագողութիւնը՝ ալ պաշտօնական համազգեստով կը ներկայանար բեմին վրայ. րիւք պէյի ռեզալէքի հասած էր ան: Օրուան հերոսները, մինչև լսել վարչական անդամները, պաշտօնապէս կը գոչնային ու պաշտօնապէս ալ կուտէին փարաները անտեղ աղտոտ վայրերու մէջ, որ նըկարագրել կարելի չէ:

Ելլադայի սեւաշն Հայտէները, Բարիզի երկրային հրեշտակները և Ալպիոնի մարմարիայ կենդանի արձանահինները՝ պարզ հարցափորձի մը տակ, շատ աւելի պերճախօսօրէն պիտի պատմեն այլազանութիւնը հաճոյքին, զոր հայ խաչագողութիւնը ստեղծեց անոնց առջև, արեւմտեան ճաշակին վրայ յայտնի գերազանցութեամբ մը:

Մայր Հայրենիքը լայնածաւալ աւերակի մը փոխուելէ ու թուրք ոստանին մէջ ալ քանի մը վրդովիչ ու անհարկի ցոյցեր տեղի ունենալէ վերջ, գաղթականութեան սպանիչ հոսանքը սկսեց դէպ ի արտասահման, եզական տագնապով մը:

Հոն այդ արտասահմանի մէջ ժողովուրդը տակաւին լայն շունչ չառած, իր շուրջը գտաւ խաչագողերու վիթխարի բանակը, որ աճապարած էր իրմէ բաւժ սորվիլ ամեն ծակուծուկ ու յեղափոխական ինչ ինչ կարգախօսութիւններու շնորհիւ:

ինքնինքը հայրենիքի նուիրումը զինուոր մը ճանչցունել հոս ու հոն: Ինչ որ պիտի ըլլար անկեղծ յեղափոխականին բանաձևը ժողովուրդէն դրամ առնելու համար, նոյնը եղաւ և խաչագողինը, աւելի ողորդիչ ու համոզիկեր:

Խաչագողութիւնը՝ յեղափոխութեան ստուերին պէս անբաժանելի էր անկէ: Ուր որ էր յեղափոխականը, հոն էր նաև խաչագողը: Ինչ որ կը խօսէր յեղափոխականը, նոյնին ճշմարիտ արձագանքը կը լսէիր և խաչագողէն: «Ժողովուրդ դրամ տուր, որ զիններ մեր եղբայրները», ահա բոլոր հմայքը, որով խաչագողը կ'սկսէր թուր վել պարպում շուկաները նորէն ալիւր քամելու համար:

Ժողովուրդը և մանաւանդ ժողովրդեան այն դասակարգը, որ ամենէն աւելի ցանկացող ըլլալով հայրենիքի ազատման, բնականաբար ամենէն աւելի շատ պիտի իյնար խաչագողին թուկարդը, գառնուկի համակերպութեամբ նորէն բացաւ իր քաակին բերանը և իր տաժանակիր աշխատութեանց արդիւնքը սիրայօժար լեցուց անոնց ափը, չը նայելով, որ այդ Բալուրի հարազատ ձագեր՝ նոյն իսկ իր աչքին առջև, յանուն սուրբ գործին, կ'ուտէին, կը խմէին և դարե՛ջուրի փրփրալից դաւաթին շուրջ իրենց վաղուան անխոտովանելի արշաւանքներուն բռօկքամը կը գծէին ծայրայեղ աներեսութեամբ:

Անդին Մայր Հայրենիքի աւերակներուն մուխըն ու ծուխը երկինք կը բարձրանար հեղձուցիչ թանձրութեամբ մը, ասդին ասոնք հայրենիքի անունով իրենց դատարկութեամբ քաակները լեցնելու հետամուտ, անընդհատ կը շարունակէին իրենց սիկարեան կեանքի բոլոր լըբութիւնները:

(Շարունակելի)

ԾԱՆՕԹ

## ԱՉԴԱՅԻՏ

Ս. Հայրապետը մէկ ամիս առաջ ուղեւորեր է Երեւան, ուրկէ գացեր է Հոգածնի վանքը, որուն նորոգութեան ձեռնարկուած է արդէն, 4000 ռուբլիի ծախքով:

— Բէօթահիւյ Հայ-Հռոմէականաց առաջնորդ Էմմանուէլ վարդապետ Պալեան տեղւոյն

ազդ. Առաջնորդարանը զիմեւով Հայ. Եկեղեցին ընդունուելու փափաք յայտներ է, եւ իր այս խնդիրքը տեղեկացուելու է Պատրիարքարան:

— Վանայ հոգեւոր հովիւ Տ. Ներսէս Արքազան տեղեկագրած է թէ Յիլիսդէ գտնուող վանեցի երկու պանդուխտ աղղայ նները կրօնափոխ եղած են բաւական ատենէ ի վեր, և թէ այլ ևս իրենց ընտանեկան յարկը վերադառնալուն յոյս չկայ: Այս տեղեկագրին վրայ, Կրօնական Ժողովը որոշեր է նորէն ամուսնանալու արտօնութիւն տալ յիշեալ երկու աղղայիններու կրօնական:


— Այրի Տիկին Յ. Էսաեան, զաւակները եւ Մկրտիչ Էֆ. Էսաեան հինգ շաբթի օրուան ճեպըն թացով Կ. Պոլիս հասեր եւ կաշարանին մէջ ընդունուելու են Էսաեան ընտանիքին ու բազմութիւ բարեկամներու կողմէ: Իսկ հանգուցեալ Յովհաննէս Էֆ. Էսաեանի մարմինը Մարտիրոսայէն շղեկնաւ դրուած է Պոլիս տանելու համար:

— Մարտիրոյ Թրանսական թերթերէն գոհութեամբ կ'իմանանք թէ «Արմէնիա»ի խմբագիր Տիար Մ. Փորթուգալեանի զաւակը Պ. Վահան Փորթուգալեան փայլուն ըննաթիւն մը անցուցեր է տարեկան հարցաքննութեանց մէջ: Տասնըչորս տարեկան պատանիին այս յաջողութիւնը զոր ի սրտէ կը շնորհաւորենք, իրաւունք կուտայ մեզ իր ապագային նկատմամբ շատ յուսալից ըլլալու և այդ պատճառաւ ալ զինքը հրապարակաւ քաջալերելու:

— Հանգուցեալ ծովանկարիչ Յովնանէս Այվազովսքի իր ծննդավայրը եղող Թէոդոսիայի Ս. Սարգիս եկեղեցիին 50,000 ռուբլի կտակեր է:

Այս գումարը հնչուն դրամ չէ, այլ մէկ քանի այդիններ են, որոնց արժէքը 50,000 ռուբլի է, և այս այդիններուն իւրաքանչիւր տարուան եկամուտները պիտի գործածուին յիշեալ եկեղեցիին պէտքերուն:

Հանգուցեալը իր կնոջը նուիրեր է Սուպալի մեծազին զիւղը, որուն տարեկան եկամուտ է 15000 ռուբլի: Ասոնցմէ զատ իր կնոջը նուիրեր է նաեւ Թէոդոսիայի իր հոյակապ տան բոլոր նկարները եւ կահ կարասին, ու իրաւունք տուեր է անոր հոն մինչեւ ցմահ անվարձ բնակելու: Իսկ կնոջը մահէն յետոյ յիշեալ տունը պիտի մնայ իր չորս աղջիկներուն, ինչպէս նաև Շախմամայ զիւղը:



## ՆԱՄԱԿ ԽՄԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ

## ԿՐԿՆԱԾՈՒՄՆՈՒԹԻՒՆ ՄԸՆ ԱՆ

Ֆիլիպէ 9 օգոստ.

Յայտնի է որ վերջերս պանդուխտ Մշեցի մը Պուլկար աղջկան մը հետ կրկնամուսնութիւն կատարած էր բաղաբիւ մէջ. այժմ կը լսենք թէ ասկէ առաջ ուրիշ կրկնամուսնութիւն մ'ալ տեղի ունեցած է հետեւեալ պարագաներու մէջ:

Գաւառացի հայ մը Յ. Նաճատեան անուն, 50-55 տարեկան, երկար տարւելէ ի վեր իր երկիրը ձգելով Պոլսկարի կապաւտանի եւ գրեթէ երկու տարի առաջ կամուսնանայ Յովհաննիս մէջ, ֆիլիպէցի հայ օրիորդի մը հետ, առանց յայտնի ընելու իր կնկան ողջ ըլլալը: Ամուսնութեան այս լուրը թէեւ ոչ բայց վերջապէս կը հասնի իր ծննդավայրը եւ կինն ու զաւկները կը փութան բողոքել ի Սօփիա (որ այժմ կը բնակի յԷջնալը) խաբարայ հօր մը եւ ամուսնոյ մը դէմ:

Անցեալ օր Սօփիաի Թաղ. խորհրդոյ անդամներէն մէկ երկուքին հետ կը տեսնուինք եւ սոյն կրկնամուսնութեան մասին տեղեկութիւն կը խնդրենք. վասն չի իրենք վկայական մը տուած են եղբ. յԷջնալին ձեռքը որպէսզի ամուսնանայ, հաւատարմութէ կինը իր գաւառին մէջ մնաւ է: Ու արդարեւ այդ անձը ասկէ 15-20 տարի առաջ ամուսնացեր բոլոր առաջին կինը մեռնելով՝ երկրորդ անգամ ալ ամուսնացեր է հայրենիքին մէջ, որու մասին բան մը չէ բեր, այլ՝ առաջին կնիք մնում ըլլալուն պաշտօնական վկայագիրը ներկայացնելով Սօփիաի Թաղ. խորհրդին եւ քահանային, այսպէս խաբար է գտնուր:

Տեսնենք, Ազգ. հոգեւոր իշխանութիւնը ի՞նչպէս պիտի մարքէ այս թնձուրը: ՍԼԱՔ

## ԶՈՒԼԱՐԱՆ

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏԱՌԵՐՈՒ

ՅԱԿՈԲ ԾԵՐՈՒՆԵԱՆԻ

Կը ձուլէ ամեն լեզուէ տաղաբական տառեր, մասնաւորաբար Հայերէն եւ Թուրքերէն, Էսպան. քաղաթ, Էնթերլինք, Գիծ եւ Կարնիւթիւր:

Գինները յոյժ գեղարմատելի: Հասցէ

AGOP DZÉROUNIAN SOPHIA (BULGARIE)

## ԺԱՄԱՆՑ

Ինքզոք մորոս տուարդ ուր է,  
Եկուր դուն ալ հաշիւդ քոն:

Կուկուրիկու ճայնիդ ի յուր:

Տեսաւ, աշտեղ շուրջդ շառիւն.

Կըթկըթներդ գնացին գուր,

Հաւեր յեկան քո ճոխ կերիւն.

Ձի գիտես ա, ասեմ ասքոր

Իր չէօբլիւն է միշտ զօրաւոր:

Վերէն իջած դուն հրեշտակ

Ինքզոքիքդ սուրբ, ծախել կուգես.

Աղէկ ամա, շիսկէ շիսակ

Ազիդ դուրսը կը քոյցանես.

Նայէ, մարդիկ ի՞նչ կըսեն քեզ.

«Ուսի՛ եղար ո՛վ հիմ աղոթես»:

Վարդ եւ կըսես, քան յեմք քեր.

Հոսքդ հոս չէ՛ սակայն վարդի.

Լափանթա յես, օ՛վ յեմ քեր

Քեզ կը անեն շուտով մեկդի.

Ինչո՞ւդ պէտք է, հոսքդ յեղած

Եղի՛ր գնա՛ դուն սրկի քաց:

Սապուն աներ աղիդ անքեր,

Հա՛ քանքես ու քանքես.

Մարմինդ՝ աղքատ, սեր է շաւ սեր,

Ձի ճերմկաւ, որ յալի քես:

Չիջես առաւմ, ո՛վ քանք մարդ,

«Սերին սապուն, խելին խաւս»:

Սիրամարգի փեսարին սակ՝

Ձէ՛, աղքատիկ, ազնաւ ես քուն.

Քեզ ալ ճանչցաւի, ինչպէս սարսակ

Եկար, աշնայես ե՛լ գնա՛ դուն.

Փեսարդ կուս քներ, աղա՛,

Ազնաւին ճայն դաղա է դա:

Անունդ չիջես, Մարկոս, Ղուկաս,

Ինչպէս եկար, անանկ կերքաւ.

Էրած սրտով կը պատմես շաւ

Թէ ժամանակն է քանքես քանք:

Թէ ազնաւը՝ սիրամարգի,

Սասանան ալ՝ հրեշտակի,

Տեղը հիմա յեմ կըսեր կոր,

Ձի ալքերնին՝ մարդիկ քոյոր,

Չորս քացեր են խոշոր խոշոր:

ՏԻՆՃԷ

# ՄԻԼԻՈՆՆԵՐՈՒ ՆՈՐ ԱՂԲԻՐ ՄԸ

ԿՈՎԿԱՍԱՀԱՅՈՑ ԶԵՌՔԸ

ՈՍԿԵՀԵՆՔԵՐ ԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ

Մօսկովսի Վեդոմոստի թերթը իր վերջին թիւերէն մէկուն մէջ կը հրատարակէ Բաղուէն զրկուած հետեւեալ հետաքրքրաշարժ թղթակցութիւնը.

«Մինչեւ հիմա Կովկասի հանքային նշանաւոր հարստութիւնը կը կազմէր նաֆթը (քարիւղ), որուն արտադրութիւնը աւելնալով տարուէ տարի վերջերս հասեր էր տարեկան 600 միլեօն ռուբլի նշանաւոր գումարի մը: Այս պատճառաւ Կովկասը կանուանէին «նաֆթային Բալիֆօրնիա»: Բայց հիմա կը պատրաստուի ոչ միայն նաֆթային այլ իսկական «Ոսկիէ Բալիֆօրնիա» դառնալ, վասն զի իր մէջ կը պարունակէ եղեր նաֆթի չափ առատութեամբ ոսկի:

Սոյն ոսկին երեւան եկած է Շամախի քաղքին մօտ մէկ քանի տեղեր: Առաջինը գտեր է Հայ անտառապահ մը՝ որ հաւաքելով քիչ մը այդ «կարծիքաւոր» հողէն կը զրկէ Բաբու իր մէկ ծանօթ հայուն, որ կը լուայ զայն եւ կը գտնէ զուտ ոսկի բաւական քանակութեամբ: Անտառապահը առանց ժամանակ կորսնցնելու կիմացնէ կառավարութեան (\*) ու ինքը Փեդերսպուրկ կը վազէ ըրած զիտը քննութեան ենթարկելու համար:

Այս լուրը արագութեամբ կը տարածուի ամբողջ Շամախի ու Բագուի մէջ: Նաֆթային կրեւտներն ալ իրար կանցնին լսելով որ իրենց մօտ միլիոններ կան պահուած, որոնց կարելի է տիրանալ եւ ունեցածներին աւելցնել:

Հիմա Շամախը լեցուն է ոսկի փնտռողներով: Զորս Պարսիկներ ալ յաջողեցան քաղաքին մօտ ոսկիի հետքեր գտնել եւ ներկայացուցին կառավարութեան:

Այդ ապագայ միլիոնատէր պարսիկները անտառապահ Հայուն օրինակին հետեւելով կա-

(\*) Ռուսական օրէնքով, ամեն հանքային գիւտ մը ընդ, ինչ որ ալ ըլլայ այդ հանքը, երբ նա առաջինը կըլլայ՝ կառավարութենէն վկայական կ'ստանայ եւ իրաւասար սեպհականատէրը կըլլայ դառնալով հանքին:

ռավարութենէն վկայական եւ արտօնութիւն ըստացան:

Այլ դիւրին է երեւակայել թէ ինչ իրարանցում պատճառեց այս երկրորդ զիւտին լուրը. որով կը հաստատուէր թէ երկիրը իր ծոցին մէջ կը պարունակէր ամբողջ ոսկիի հանքեր որոնք մինչեւ այսօր անծանօթ մնացած էին:

Հիմա ամբողջ խօսակցութեան առարկան թէ՛ Բագուի եւ թէ՛ Կովկասի մէջ այդ հանքերն են, եւ ամեն կողմէ մարդիկ կը թափին Շամախ:

Ռուս թերթը ցաւ կը յայտնէ թէ (եւ ասիկա զարմանալի չէ՝, քանի որ զրոյցը Ռուս թերթ մըն է) այդ հարուստ արդիւնաբերութիւնը կըրկին կանցիի Հայերուն եւ օտարներուն ձեռքը:

## ԱՅԼԵՒ ԱՅԼՔ

ՊԱՐՍԻՑ ՇԱՀԻՆ անհամար գանձերուն մէջ առաջին տեղը կը բռնէ Սիրամարգի Գահը, որ աշխարհի ամենաճոխ զարդը կը համարուի: Ամբողջ արծաթէ շինուած է, իսկ վրայի մասը համակ ձոյլ ոսկի: Ծայրէ ի ծայր, դադաթէն մինչեւ յատակը ադամանդներով ընդհարուած է: Ետեի կողմը կայ ականակուռ աստղ մը, որ դիտողին աչքերը կը չլացնէ: Մեղեսիկ կոչուած թանկագին քարերով շրջապատուած է այն կապերտը որուն վրայ կը հանդիսանայ Շահը, ու մարգարտներով եղերուած է այն բարձր՝ որուն վրայ կը խոնարհի Ն. Վեհափառութեան զուլալը: Սիրամարգի գահը մասնադէտներու կողմէ 5 միլիոն անդլ. ոսկի կը հաշուուի. եթէ այս թիւ չափազանց ալ ըլլայ, չիտակ է որ այդ գումարին կէսէն աւելին կ'արժէ գահը:

Հարցախնդիր Բովսէրը ինք կողոպտուած. — Բարիդի Սեփաստորը Պուլվառին վրայ անցեալ շաբթու երեք կասկածելի անձեր ձերբակալուեցան՝ ոստիկանութեան կողմէ: Անոնցմէ մին՝ Տըզօպրի, որ «գողերու պետ» ծաղրանունը կը կրէ, նոյն քնքն Բովսէրէն կողմէ հարցաքննութեան ենթարկուեցաւ: Հարցաքննութենէն ետքը Բովսէրը ճաշի գնաց: Հաղիւ թէ տունը հասած էր, տեսաւ որ ժամացոյցն ու քսակը անյայտ եղած էին:

Իսկոյն իր պաշտօնատեղին դարձաւ, խոհեմով թէ գրասենյակին վրայ մոռցած է զանոնք, բայց ի զուր փնտռեց: Երբ ալ յուսահատած էր իր կորուսածները գտնելու, ոստիկան մը իմաց տըլաւ իրեն թէ Տըզօպրի կ'ուզէ տեսնել զինքն ու

չատ կարեւոր յայտնութիւն մը ընել: Տըզօպրի ներս բնութեամբ, Գոմիսէրին դարձաւ և ըստ խնդարով: — «Տէր, թոյլ տուէ՛ք ինձ որ ձեզ վերադարձնեմ ձեր ժամացոյցն ու քսակը: Առի զանոնք ձեր առջև արդարացիելու համար «գողերու պետ» տիտղոս: Ինչպէ՛ս կը տեսնէ՛ք, ձեր ենթադրածէն աւելի պարկեշտ եմ»:

Եւրոպական տէրութիւններէն իւրաքանչիւրը մասնաւոր անունով մը կը ճանչցուի Զինաստանի մէջ: Անգլիա Երկիր-Քուօ է, որ կը նշանակէ «ծաղիկալ երկիրը»: Գերմանիա Դէ-Քուօ՝ «առաքինի երկիր»: Ֆրանսա՝ Փա-Քուօ՝ «Օրինաց երկիրը»: Իտալիա՝ Ճէ-Քուօ՝ «Արեւու երկիրը»: և Միացեալ Նահանգներն են Նէյ-Քուօ՝ «Գեղեցիկ երկիրը»:

## Ծ Ի Ծ Ա Ղ

### ՀԱՇՈՒՅՑՈՒՑԱԿ ՄԸ

Անցեալները եգիպտահայ քաղաքի մը մէջ Ակնցի սեղանաւոր ազգային մը մեռնելով, ըստ սովորութեան եկեղեցին իմաց կը տրուի ու պէտք եղած վայելուչ հանդէսով յուղարկուեցնուածն և թաղման արարողութիւնը կը կատարուի:

Հանդուցելոյն պարագաները, որ բարեկամի մը միջոցաւ վարդապետի, քահանայի, դպրաց դասու, ժամկոչի, լուսարարի և մոմակալներուն վարձքը նոյն օրը իսկ անոնց յանձնած էին, քանի մը օրէն ետքն ալ եկեղեցիին համար տրուելիք դրամին քանակութիւնը միևնոյն բարեկամին միջոցաւ թաղ. խորհուրդին կը հարցնեն:

Թաղ. խորհուրդը նկատելով որ ռսեն ատեն ասանկ հարուստ մարդ չի մեռնիր և թէ հարկ անհրաժեշտ է որ այս առթիւ քիչ մը շտկէ՛կ դրամ մտնէ սնտուկը, ուստի 2500 չորուչ եղիպտական ողջ դրամ կը պահանջէ:

Սեղանաւորին պարագաները պահանջուած այս չափազանց դուրմարէն յանկարծակիի կուգան ու պահ մը մտածելէ ետքը՝ լուր կը զրկեն թաղ. խորհուրդին որ բարեհաճի սոյն 2500 չորուչին մանրամասն մէկ հաշուեցուցակը իրենց զրկել:

Այս անգամ ալ թաղ. խորհուրդը սոյն նախկինալ առաջարկէն յանկարծակիի կուգայ,

բայց նկատելով որ հանդուցելոյն ընտանիքը ասանկ առաջարկ մը ընելու իրաւունքը կը վայելէ, ուստի իր բարտաւարին կը հրամայէ որ պզտիկ չը մնալու համար նոյն 2500 չորուչին համեմատ մանրամասն հաշուեցուցակ մը շինէ: Պարոն քարտուղարը, որուն համար կըսուի թէ ասանկ բաներու մէջ բաւական յոշոյութիւն ունեցող կտրող կապող մէկն էր, հետեւեալ հաշուեցուցակը կը պատրաստէ ու զրկէ:

|                                                                                                                                         |            |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------|
| Նուէր եկեղեցւոյ . . . . .                                                                                                               | 1500 Ղ.ՐԶ. |
| Խաչ . . . . .                                                                                                                           | 150        |
| Եկեղեցիին մէջ դադաղին զխուռն վերել ու ոտքին տակը վառուած 2 կերօնի համար . . . . .                                                       | 100        |
| Վարդապետին շուրջառին վարձք . . . . .                                                                                                    | 50         |
| Գամբանայ . . . . .                                                                                                                      | 50         |
| 5 քահանայից փորութարին վարձք . . . . .                                                                                                  | 50         |
| Լուսաւորեալ . . . . .                                                                                                                   | 100        |
| Գարապետին հագած խապառալը շապիկին վարձք . . . . .                                                                                        | 50         |
| Եկեղեցիին ընդհ. քահանայի վառելու համար . . . . .                                                                                        | 150        |
| Դադաղակիրներու հանգերձի վարձք . . . . .                                                                                                 | 100        |
| Խաչալէմներու . . . . .                                                                                                                  | 50         |
| Դպրաց ու քահանայից ձեռնաց մոմերը զարդարող լուսարարին բացէն նուէր . . . . .                                                              | 60         |
| Սարկաւագին ուրարին վարձք . . . . .                                                                                                      | 45         |
| Քահանայից փորութարները, դադաղակիրներու հանգերձները ու դպրաց շապիկները պօխմա ընելով գերեզմանաւորներէն եկեղեցի փոխադրող ժակոչին . . . . . | 25         |
| Ճամբան վարդապետին շուրջառին բէշը վեր վերցնող Բ. ժամկոչին . . . . .                                                                      | 20         |
|                                                                                                                                         | <hr/> 2500 |

Երբ սոյն հաշուեցուցակը կը կարդացուի, հանդուցելոյն մտերիմ բարեկամներէն զուարճախօս անձ մը զայն կառնէ ու կիրակի օրը թաղ. խորհրդարան կը ներկայանայ, ուր հետեւեալ խօսակցութիւնը տեղի կունենայ:

— Ծառայ եիմ թաղական աղաներու: Մեղաւորս՝ կենդանի աղօթքը բարեխօս մեր հէմիչէհրի լուսափօքի Զէնօն աղային վէֆաթին սէպէպովը եկեղեցիուն հրմար տըսելիք ավայիտին հիսապը բույթ ու թէսվիլէ անելու եկած եիմ:

— Օ, շատ աղէկ, շնորհակալ եմք, հաճի աղա, հրամայեցէք, նստեցէք: Ժամկոչ, աթոռ տուէք սուրճ ապսպրեցէք: Հրամայեցէք էֆէնտիմ, սա թաղէ թիւթիւնէն սիկար մը շինեցէք:

— Շնորհակալ եիմ էֆէնտըմ. ծառայականս տօխսան սէքիզ թարիխէն ֆըսֆսուկը թէրք ա-  
րած եիմ:

— Շատ լաւ, ուրեմն մինչեւ որ սուրճը պատ-  
րաստուի, մէնք կ'ընանք գործերնիս կարգադրել.  
(խորհրդարիմ) Պ. Սաղապիէլ, որչափ էր մեր ղըր  
կամ հաշուեցուցակը:

— 25 անգլ. ոսկի:

— Այո, ճիշդ է, կը յիշեմ, 2500 ղըշ. եգիպ-  
տական ողջ դրամ էր:

— Էֆէնտըմ, վախիտէ ճէման եէքիւնը 2500  
ղըրչի պալիզ է իսէ տը՝ քանի մը բաներ ադ-  
բուսուլային մէջ աճէլէթէն ղիքը ու ղայտ արած  
չըլլալնուդ. հըմար՝ կուզենք որ՝ անոնք ալ հիսա-  
պին տախիլ ըլլին, քիւնչեմ, օգորմած հոգուն  
տիրուքտանքը չին ուզեր ուր պակաս բան մը  
ըլլի:

— Ո՛հ, շատ շնորհակալ ենք թէ՛ Ձեր եւ թէ՛  
անոնց բարեսրտութենէն. արդարեւ մէկ քանի  
բաներ հաշուեցուցակին մէջ նշանակուած չեն  
նէ՛ պատճառը՝ հանգուցեալ մեր ամենուս սիրելի  
և յարգելի բարեկամը ըլլալուն համար, խոր-  
հուրդս այնչափ բարակը չփնտռելով ափ յափոյ  
այդ հաշուեցուցակը ղըկամ էր. բայց քանի որ  
հանգուցելոյն աղնուաշուք պարագայը կը փա-  
փաքին որ պակաս բան մը չըլլայ, խորհուրդս ղը-  
նորհակալութեամբ կը համակերպի անոնց առա-  
ջարկին: Ուստի կը խնդրենք, ըսէք մեզի թէ ո-  
րո՞նք են այդ մոռցուածները, որպէս ղի գումա-  
րին միայ աւելցնենք:

— Էֆէնտըմ, պինտ էռաջ, տէրպապաներուն  
փորուրարին ու սուրչառին համար քիրամի թա-  
լէպ կանէք նը՝ ի՞նչ միւճիւկով վարդապետին վե  
ղարին հըմար ալ բան մի չէք ուզեր:

— Որովհետեւ սիրելիս, փորուրարն ու սուրչա-  
ռը եկեղեցիին անտուկը կը շինէ, իսկ վեղարը  
վարդապետը իր քսակէն կը շինէ:

— Բարի. սա դպրապետին խապառալը շապի-  
քին հըմար 50 ղըշ. քիրա գրուած է, ինչո՞ւ ա-  
նոր մինտէս սախալին հըմար բան մի գրուած չէ:

— Ճանըմ հաճի աղա, ատանկ բան կըլլայ:

— Ինչո՞ւ չի տի ըլլի, կէս սալթ հագած շա-  
պիքին քիրա կըլլի տէ մարդուն աստար տարուան  
էմէք տալով թէօրէթմիշ արած մօրուքին հը-  
մար քիրա չըլլի՞ր մի եւ:

— Եղբայր...

— Փամբանային հըմար քիրա կըլլի տէ՛ ի՞նչ միւ-

ճիւղով ատոր չուփանին հըմար իր քիրատի մըն  
ալ թալէպ չիք աներ:

— Ճանըմ հաճի աղա, հասկցանք, դուք մեզի  
հետ կատակ կընէք կոր:

— Ատանկ բան կըլլայ:

— Պարտարկն ի՞նչ ճիւղերս է. ժամուն ընդհա-  
նուր ջահալառութեանը հըմար 300 ղըշ. կուզէք  
նը՝ ատոնք մարեւուն հըմար ինչո՞ւ բան մի չէք  
ուզեր:

— Բայց ատանկ սովորութիւն մը չի կայ, առա-  
ջին անգամ ձեզմէ կիմանանք կոր:

— Մենք ալ առաջին անգամ ձեզմէ կիմանանք  
ուր՝ նուէր եկեղեցւոյ ըսելով 1500 ղըշ. մաթ-  
լուպ ընելէ որչրա՝ եկեղեցուն թէ՛ ճէմիլլէթին հը-  
մար ալ ղատ ղատ քիրա մի թալէպ ըլլի. լաթէշ-  
պիհ, տուն մի քիրալամիշ անիք նէ՛ անիք բէն-  
ճէրէ, անպար ու աօլապին հըմար ալ ղատ քիրա  
կու տուրձի՞ մի եւ: Ատանկ բաներ ընէք նը՝ մարդ-  
ճայմիշ կըլլի ու թախլան չի նետի՞ր, պինտէն ա-  
լէյն թաղական խորհուրդներն ալ բերանն ն բօր-  
եալին կու բանան:

Թաղ խորհուրդոյ ատենապետը մտածելով որ  
ակնցիին գիտալութիւնները իրաւայի են, դու-  
ժը անուշի կապելու համար կը հարցնէ:

— Հաճի աղա, հիմա ի՞նչպէս կուզէք որ ընենք:

— Էֆէնտըմ, 1000 ղըշ տի տանք նուէր ե-  
կեղեցւոյ հիսապին մահսուպ, ըմմէն թէ՛ ճէմիլ-  
լէթին քիրան ալ մէջն ըլլալու խալով. առէք  
սա տոտը նիրալիզ ու հիսապինիզ դոյցէք, ըսե-  
լով 10 անգլ. ոսկի կը դնէ սեղանին վրայ ու կառ-  
նէ կը քալէ:

Թաղ. խորհուրդն ալ ղգալով իր առած քայլին  
սխալ ըլլալը, «չէն կեցք» կըսէ ու դրամը կը  
դանձէ:

Կը յուսանք թէ նոյն խորհուրդը այս բանէն կը  
խրատուի, ու ըստ թրքական առածի՝ «ֆրօաթ-  
տան խթիֆտտէ» ըսելով, ժամանակ մը Պոլսոյ  
կարգ մը թաղ. խորհուրդներու ըրածին պէս հարո-  
նիքի, մկրտութեան ու ննջեցեալի համար իրեն  
դիմալներուն հետ այլ եւս անխղճութեամբ չը վար-  
ուիր:

ԱՆՇԱՐԸ

 Գիւղերու և արտասահմանի բաժանորդ-  
ներէն կը խնդրենք որ իրենց բաժնեգիրնը վը-  
ճարեն:

Отговорникъ Ж. ИВ. ЖЕКОВЪ  
Печатница „Взаимность“ — Варна.